

ՀԾ-Հաշվետար 2012

ՀԾ-Հաշվետար 2012-ը ֆինանսների կառավարման համակարգերի ստեղծման 25-ամյա փորձ ունեցող Հայկական Ծրագրեր ընկերության նոր մշակումն է:

Համակարգում ներառված ֆունկցիոնալությունը, հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանությունը, հասկանալի ինտերֆեյսը և օգտագործման պարզությունը **ՀԾ-Հաշվետար 2012**-ը դարձնում են պարզ հաշվապահությունների ավտոմատացման իդեալական գործիք: Համակարգն աշխատեցնելու համար հատուկ ուսուցում կամ ծավալուն ներդրում չի պահանջվում:

ՀԾ-Հաշվետար 2012 համակարգը վարում է սինթետիկ և գործընկերների (դեբիտորների/կրեդիտորների) հաշիվների հաշվառում: Համակարգը հնարավորություն է տալիս մուտքագրել հաշվապահական սկզբնական փաստաթղթերը, դրանց հիման վրա կատարել համապատասխան ձևակերպումներ և ստանալ բազմաթիվ հաշվետվություններ: Համակարգը գործում է մեկ աշխատատեղի տարբերակով, սակայն թույլ է տալիս վարել անսահմանափակ քանակությամբ կազմակերպությունների հաշվառում:

ՀԾ-Հաշվետար 2012 համակարգի կարևոր հնարավորություններից են՝

- Տարվում է բազմարժույթային հաշվառում
- Ձևավորում են բոլոր սկզբնական փաստաթղթերը
- Ստացվում են հետևյալ ֆինանսական և հարկային հաշվետվությունները՝
 - Հաշվապահական հաշվեկշիռ (Ձև N1)
 - Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն (Ձև N2)
 - Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն (Ձև N3)
 - Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (Ձև N4)
 - Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ (Ձև N5)
 - ԱԱՀ-ի հաշվարկ
 - Տեղեկանք հարկային հաշիվների վերաբերյալ
- Ստացվում են բազմաթիվ սինթետիկ և անալիտիկ հաշվետվություններ
- Ստացվող տեղեկությունները կարելի է արտահանել MS Word և MS Excel

համակարգեր

• **ՀԾ-Հաշվետար 2012** համակարգը սերտորեն ինտեգրացված է **ՀԾ-ԿլիենտԲանկ** և **ՀԾ-ԻնտերնետԲանկ** համակարգերի հետ, որոնք հնարավորություն են տալիս բանկի հաճախորդին ղեկավարել իր բանկային հաշիվները՝ առանց բանկ այցելելու, խուսափել ժամանակի ավելորդ կորստից և այցելության հետ կապված ծախսերից

- **ՀԾ-Հաշվետար 2012** համակարգից հնարավոր է տվյալների սահուն տեղափոխում դեպի **ՀԾ-Հաշվապահ** համակարգ
- Համակարգն աշխատում է հայերեն և անգլերեն լեզուներով:

Ֆունկցիոնալ նկարագրություն

Տեղեկատուներ

Տեղեկատուներում լրացվում են այն բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են համակարգի օգտագործման՝ գործողությունների գրանցման, փաստաթղթերի տպման և հաշվետվությունների ստացման համար:

- Հաշվային պլան: Համակարգում արդեն իսկ տեղադրված է առևտրային կազմակերպությունների ստանդարտ հաշվային պլանը, որը կարելի է խմբագրել, օրինակ՝ նոր ենթահաշիվներ ավելացնել: Յուրաքանչյուր վերջին մակարդակի հաշվի համար նշվում է, թե արդյոք այն ունի ըստ գործընկերների հաշվառում և նկարագրվում է թույլատրելի արժույթների ցանկը
- Գործընկերներ: Գործընկերոջ քարտում մուտքագրված տվյալներն օգտագործվում են վճարման հանձնարարագրերի, հաշիվ-ապրանքագրերի, վաճառք (մանրածախ), դրամարկղի մուտքի և ելքի օրդերների լրացման համար: Որպես գործընկեր նկարագրվում են կազմակերպության հետ առնչվող մատակարարները, գնորդները, առհաշիվ անձինք
- Գործընկերների խմբեր: Հաշվետվություններում գործընկերների ցուցակը ֆիլտրելու համար կազմավորվում է խմբերի տեղեկատու
- Ծառայություններ: Նկարագրվում են ստացվող և մատուցվող ծառայությունները՝ չափման միավորներով և գներով
- Նյութական արժեքներ: Համակարգում հնարավոր է մուտքագրել և օգտագործել նյութական արժեքների վերաբերյալ բազմաթիվ տվյալներ՝ խումբ, չափման միավոր, համապատասխան հաշիվը հաշվային պլանում, վաճառքի, արտարժույթային և մանրածախ գին
- Արտարժույթների փոխարժեքներ: Տեղեկատուում տվյալները կարելի է մուտքագրել ձեռքով կամ ներմուծել Հայկական Ծրագրեր-ի վեբ-կայքում տեղադրված համապատասխան ֆայլով: Արտարժույթի փոխարժեքներով կատարվում են վերագնահատումներ և որոշվում փոխարկման գործարքներից ստացված օգուտը կամ վնասը
- Բանկեր: ՀՀ-ում գործող բանկերի և նրանց մասնաձյուղերի անվանումներն ու կոդերը
- Հաշվարկային հաշիվներ: Կազմակերպության հաշվարկային հաշիվները տարբեր բանկերում
- Տիպային գործողություններ: Կարելի է մեկ անգամ նկարագրել հաճախ օգտագործվող հաշվապահական ձևակերպումները և այնուհետև, գործողությունը գրանցելիս պարզապես տեղեկատուից ընտրել անհրաժեշտ գործառնությունները
- Հաշիվների թղթակցություններ: Մուտքագրված են հաշիվների թույլատրելի թղթակցությունները: Գործառնություններ գրանցելիս կատարվում է այս տեղեկատուի հետ ստուգում՝ պատահական սխալներից խուսափելու համար:

Գործողություններ

- Սինթետիկ հաշիվներով հաշվապահական ձևակերպումների գրանցում՝ արտարժույթային և դրամային հիշարար օրդերներով
- Առհաշիվ անձանց և այլ դեբիտորներ/կրեդիտորների հետ կապված դրամային և արտարժույթային ձևակերպումների գրանցում
- Վճարման հանձնարարագրերի ձևավորում
- Վճարման հանձնարարագրերի արտահանում ՀԾ-ԿլիենտԲանկ կամ ՀԾ-ԻնտերնետԲանկ համակարգեր, որտեղ փաստաթղթերը կարելի է հաստատել և ուղարկել բանկ

- ՀԾ-ԿլիենտԲանկ համակարգից կազմակերպությանը կատարված փոխանցումների ներմուծում և ավտոմատ ձևակերպում
- Դրամարկղի մուտքի օրդերների ձևավորում (գնորդներից, այլ դեբիտորներից)
- Դրամարկղի ելքի օրդերների ձևավորում (մատակարարներին, այլ կրեդիտորներին)
- Տարբեր արժույթներով՝ ապրանքա-նյութական արժեքների և ծառայությունների վաճառքի հաշիվ-ապրանքագրերի ձևավորում
- Համակարգում գրանցված հարկային հաշիվների համապատասխան ֆորմատով արտահանում և ներմուծում eInvoicing ծրագիր
- Ապրանքա-նյութական արժեքների և ծառայությունների մանրածախ վաճառք
- Արտարժույթային հաշիվների վերազնահատում: Նշված օրվա դրությամբ, հաշվի ամենելով գործող արտարժույթային փոխարժեքները, կատարվում է մեկ կամ մի-քանի հաշիվների մնացորդների վերազնահատում՝ հաշվելով օգուտ կամ վնաս
- Արտարժույթի փոխարկում: Կատարվում են դրամ-արտարժույթ, արտարժույթ-դրամ, արտարժույթ-արտարժույթ տեսակի փոխարկումներ՝ օգուտների կամ վնասների հաշվարկով
- Գործընկերների՝ արտարժույթով արտահայտված պարտավորությունների վերազնահատում
- Գործընկերների՝ արտարժույթով արտահայտված պարտավորությունների փոխարկում

Հաշվետվություններ

- Մնացորդների վիճակը և շրջանառության տեղեկագրերը դրամով և արտարժույթով
- Տրված հաշվի T-հաշիվ՝ դրամով և արտարժույթով
- Գործողությունների մատյան՝ դրամով և արտարժույթով
- Ֆինանսական հաշվետվությունները՝ ֆինանսների նախարարության կողմից պահանջվող տեսքերով
- ԱԱՀ-ի հաշվարկ
- Տեղեկանք հարկային հաշիվների վերաբերյալ: Հաշվետվությունն արտահանվում է նաև էլեկտրոնային եղանակով ներկայացման ֆորմատով
- Գործընկերների մնացորդների վիճակը և շրջանառության տեղեկագրերը դրամով և արտարժույթով՝ ըստ կուտակիչ հաշվի
- Գործընկերոջ T-հաշիվ՝ դրամով և/կամ արտարժույթով
- Գործողությունների մատյան՝ դրամով և արտարժույթով: